

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## 1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ 2

1.1 Օրենքներ -----	2
1.2 ՀՀ կառավարության որոշումներ -----	7
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ-----	11

## 2. Հարակից (ՀՀ ԿԱ ՊԵԿ գործունեությանն առնչվող) օրենսդրության նշանակալի փոփոխություններ 16

## 3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ 18

3.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների -----	18
3.2 Միջազգային համագործակցություն -----	18
3.3 ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ -----	19
3.4 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ-----	20

# 1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1 ԶՅ Օրենքներ

Փաստաթուղթ	«Չարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԶՅ օրենք
Ամսաթիվը և համարը	11 ապրիլի 2011թ., ԶՕ-154-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 32 (835), 03.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ գույքի արգելանքը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով հարկ վճարողի գույքային իրավունքների սահմանափակման միջոցով հարկային մարմնի կողմից իրականացվող գործողություն է: Արգելադրումն իրականացվում է բանկային հաշիվների արգելադրման, ինչպես նաև գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունքի սահմանափակման միջոցով՝ հարկային պարտավորությունների չափով:

Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չկատարված պարտավորության չափը հինգ հարյուր հազար կամ ավելի դրամ կազմելու դեպքում հարկային մարմնի

ղեկավարն օրենքով սահմանված կարգով իրավունք ունի հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին հանձնարարագիր հրատարակել: Գույքի արգելանքը կարող է կիրառվել միայն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով: Արգելադրման ենթակա է միայն այն գույքը, որն անհրաժեշտ է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու համար՝ հարկային պարտավորությունների չափով:

Օրենքում կատարված լրացմամբ կարգավորվում են հարկ վճարողի գույքի վրա հարկային մարմնի կողմից արգելանք դնելու հետ կապված այլ հարաբերությունները:

Փաստաթուղթ	«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ԶՅ օրենք
Ամսաթիվը և համարը	26 մայիսի 2011թ., ԶՕ-185-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 39 (842), 24.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Օրենքը տարածվում է այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև պետական կամ պետական բաժնեմաս ունեցող կազմակերպությունների վրա, որոնք 2009թ-ի դեկտեմբերի 31-ը ներառող և (կամ) դրան նախորդող հաշվետու ժամանակաշրջանների արդյունքներով ունեն հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքներ և դրանց նկատմամբ հաշվարկված տույժեր, տուգանքներ (հարկային պարտավորություններ): Վեր-

ջիններս կարող են մինչև 2011թ-ի օգոստոսի 20-ը դիմել իրենց հաշվառման վայրի հարկային մարմին՝ վերոնշյալ օրենքին համապատասխան հարկային պարտավորությունների մարման ժամանակացույց հաստատելու համար: Օրենքով սահմանվում է նաև հարկային պարտավորությունների մարման կարգը: Վերոնշյալ հարկ վճարողները, որոնք սահմանված ժամանակացույցով փաստացի կմարեն ունեցած հարկային ապառքները, կազատվեն հարկային օրենսդրության

համաձայն հաշվարկված տույժերից, տուգանքներից: Հարկային պարտավորությունների մարման ժամանակացույցի առաջին իսկ խախտման դեպքում հարկային մարմինը պարտավորությունների բռնագանձման հայց է ներկայացնում դատարան: Հարկ վճարողները, որոնց նկատմամբ 2009թ-ի դեկտեմբերի 31-ը ներառող և (կամ) դրան նախորդող հաշվետու ժամանակաշրջանների արդյունքներով առաջացած հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու համար ներկայացվել են բռնագանձման հայցեր, հարկային մարմնի հետ կնքում են հաշտության համաձայնություն:

«2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենք

Փաստաթուղթ	«2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	26 մայիսի 2011թ, ՀՕ-186-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 39 (842), 24.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Օրենքը տարածվում է այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև պետական կամ պետական բաժնեմաս ունեցող կազմակերպությունների վրա, որոնք 2008թ-ի հունվարի 1-ի դրությամբ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին չեն ներկայացրել որևէ հաշվետվություն, հաշվարկ կամ հայտարարագիր և հարկային մարմնում առկա փաստաթղթերի համաձայն չունեն գույք ու հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ կամ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը

գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի համաձայն չեն վերագրանցվել, չունեն գույք և հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ: Օրենքով սահմանվում է հարկ վճարողների լուծարման (պետական հաշվառումից հանելու) կարգը: Սահմանվում է, որ անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու կամ կազմակերպությունների լուծարման դեպքում մեկ ամսվա ընթացքում պետական ռեգիստրը տեղեկատվություն է տրամադրում հարկային մարմնին՝ հարկ վճարողին հարկային հաշվառումից հանելու նպատակով:

Փաստաթուղթ	«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	25 մայիսի 2011թ, ՀՕ-187-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 39 (842), 24.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ ՀՀ կառավարության սահմանած չափանիշների համաձայն՝ ՀՀ կառավարության լիազոր մարմնի կողմից որպես կոնցեսիայի պայմանագրեր որակված՝ ծառայությունների մատուցման կոնցեսիոն համաձայնությունների շրջանակներում կոնցենդենտից հանրային ծառայությունների ենթակառուցվածքների շահագործման իրավունքը կոնցեսիոնների մոտ շահութահարկով հարկման նպատակով հաշվառվում է որպես ոչ նյութական ակտիվ,

որի գծով ամորտիզացիոն մասհանումները կատարվում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով: Ամորտիզացիոն մասհանումները կատարվում են միայն այն դեպքում, եթե այդ համաձայնությունները կոնցեսիոնների և կոնցենդենտի կողմից վերոնշյալ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 90-օրյա ժամկետում, ՀՀ կառավարության սահմանած չափանիշների համաձայն ՀՀ կառավարության լիազոր մարմնի կողմից որակվեն որպես կոնցեսիայի պայմանագիր:

Վերոնշյալ օրենքի իմաստով կոնցենդենտ է համարվում պետական կամ համայնքային մարմինը, որը որոշակի ժամանակահատվածով կոնցեսիոներին է տրամադրում հանրային ծառայությունների ենթակառուցվածքներ՝ դրանք շահագործելու և (կամ) սպասարկելու նպատակով, կոնցեսիոներ է համարվում իրավաբանական անձ հանդիսա-

ցող ռեզիդենտ կազմակերպությունը, որին կոնցենդենտի կողմից տրամադրվում են հանրային ծառայությունների ենթակառուցվածքներ՝ հանրային ծառայություն մատուցելու և (կամ) այն բարելավելու նպատակով, և որը շահագործում և (կամ) սպասարկում է այդ ենթակառուցվածքները սահմանված ժամանակաշրջանի ընթացքում:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	25 մայիսի 2011թ, ՀՕ-188-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 39 (842), 24.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

### Համառոտ նկարագիր

Օրենքով սահմանվում է, որ կոնցեսիոների կողմից ՀՀ կառավարության սահմանած չափանիշների համաձայն՝ ՀՀ կառավարության լիազոր մարմնի կողմից որպես կոնցեսիայի պայմանագիր որակված գործարքի պայմանների շրջանակներում կոնցենդենտին պատկանող ենթակառուցվածքային ակտիվները, դրանց առանձին տարրերի վրա կատարված բարելավման արդյունքը կամ գնված կամ կառուցված կամ փոխարինված ենթակառուցվածքային ակտիվները, դրանց կազմում առանձին տարրերը կոնցեսիայի պայմանագրի գործողության ընթացքում կամ ավարտին կոնցենդենտին սեփականության իրավունքով փոխանցելու գործառնությունները, ինչպես նաև կոնցենդենտին կոնցեսիոն ծառայությունների մատուցումը:

Վերոնշյալ օրենքի իմաստով կոնցենդենտ է համարվում պետական կամ համայնքային մարմինը, որը որոշակի ժամանակահատվածով կոնցեսիոներին է տրամադրում հանրային ծառայությունների ենթակառուցվածքներ՝ դրանք շահագործելու և (կամ) սպասարկելու նպատակով:

Կոնցեսիոներ է համարվում իրավաբանական անձ հանդիսացող ռեզիդենտ կազմակերպությունը, որին կոնցենդենտի կողմից տրամադրվում են հանրային ծառայությունների ենթակառուցվածքներ՝ հանրային ծառայություն մատուցելու և (կամ) այն բարելավելու նպատակով, և որը շահագործում և (կամ) սպասարկում է այդ ենթակառուցվածքները սահմանված ժամանակաշրջանի ընթացքում:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	25 մայիսի 2011թ, ՀՕ-194-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 39 (842), 24.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ ԱԱՀ-ից ազատվում են նաև ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտե-

սական գոտու շահագործողին ծառայությունների մատուցումը, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարումը:

Փաստաթուղթ	«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	25 մայիսի 2011թ, ՀՕ-195-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 39 (842), 24.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ հարկվող եկամուտը որոշելիս ՀՀ տարածքում ստեղծված ազատ տնտեսական գոտու՝ ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով շահագործող հան-

դիսացող հարկատուների մոտ համախառն եկամուտը նվազեցվում է ազատ տնտեսական գոտում իրականացված գործունեությունից ստացված եկամտի չափով:

Փաստաթուղթ	«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	25 մայիսի 2011թ, ՀՕ-196-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 39 (842), 24.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ ՀՀ տարածքում ստեղծված ազատ տնտեսական գոտում իրականացված գործունեությունից՝ օրենքով սահմանված կարգով շահագործող հանդիսացող հարկվճարողի հաշվետու տարվա շահութահարկի գումարը ազատ տնտեսական գոտու շահա-

գործում իրականացնելու ժամանակահատվածի համար նվազեցվում է 100 տոկոսով: Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ ոչ ռեզիդենտի՝ ՀՀ տարածքում ստեղծված ազատ տնտեսական գոտու շահագործողներից ստացած եկամուտը հարկման ենթակա չէ:

Փաստաթուղթ	«Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	25 մայիսի 2011թ, ՀՕ-197-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 39 (842), 24.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ գույքահարկից ազատվում են ազատ տնտեսական գոտու տարածքում գտնվող ազատ տնտեսական գոտու շահագործողներին պատկանող կամ նրանց կողմից օգտագործվող հասարակական և արտադրական նշանակության շենքերը և շինությունները:

հագործողներին պատկանող կամ նրանց կողմից օգտագործվող հասարակական և արտադրական նշանակության շենքերը և շինությունները:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	25 մայիսի 2011թ, ՀՕ-200-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 39 (842), 24.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

### Համառոտ նկարագիր

Օրենսգրքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառման դրույթը չի տարածվում ռազմական նշանակության

արտադրանքի, ինչպես նաև երկակի նշանակության ապրանքների, տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների վրա:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	23 հունիսի 2011թ, ՀՕ-212-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 42 (845), 13.07.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ ԱԱՀ-ից ազատվում են ԱՏԳ ԱԱ դասակարգչի 8432, 8433, 8434, 8436, 8701 ծածկագրերին դասվող տեխնիկայի և մասերի, 31 ապրանքախմբի ծածկագրերին դասվող պարար-

տանյութերի, 3808 91, 3808 92, 3808 93, 3808 94, 3808 99 ապրանքախմբի ծածկագրերին դասվող թունաքիմիկատների, գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների սերմացուների և տնկանյութի իրացումը:

Փաստաթուղթ	«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	23 հունիսի 2011թ, ՀՕ-213-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 42 (845), 13.07.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ ԱՏԳԱԱ-ում ներառվում են նաև «1001 90 100 սպելտա ցանքի համար, 1001 90 910 փափուկ ցորեն և մեսլին սերմացու, 1003 00 100 գարու սերմացու, 1005 10 եգիպտացորենի սերմացու, 3808 91 ինսելտիցիդներ, 3808 92 ֆունգիցիդներ, 3808 93 հերբիցիդներ, բույսերի հակաաճային և աճի կարգավորման միջոցներ, 3808 94 ախտահանող միջոցներ, 3808 99 այլ միջոցներ՝ նախատեսված միկրոբների, միջատների և կրծողների ոչնչացման համար» ծածկագրերին դասվող ապրանքատեսակները: Օրենքում կատարված փոփոխությամբ ԱՏԳԱԱ-ից հանվում են 1207, 1209, 3101 00 000, 8432, 8433, 8434 և 8436 ծածկագրերին դասվող ապրանքատեսակները:



Փաստաթուղթ	«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	23 հունիսի 2011թ, ՀՕ-218-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 43 (846), 15.07.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ Էլեկտրոնային եղանակով հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշ-

վետվությունների, այլ փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացումը պարտադիր է նաև 2012 թվականի հունվարի 1-ից

Նախորդ հաշվետու տարվա արդյունքներով 58.35 միլիոն դրամից ավելի ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն ունեցող (ավելացված արժեքի հարկի շեմը գերազանցած) կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար: Մինչև 2012 թվականի հունվարի 1-ն ավարտ-

ված հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և տեղեկությունները հարկային մարմիններ կարող են ներկայացվել մինչև 2012 թվականի հունվարի 1-ը գործող կարգով:

## 1.2 | ԶԳ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 24-ի N 294 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԶԳ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	20 մայիսի 2011թ, N 642-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 31 (834), 01.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 24.07.1997թ-ի N 294 որոշման 1-ին կետի «ա» ենթակետը, որով սահմանվում էր, որ ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրը յուրաքանչյուր ամսվա արդյունքներով, մինչև հաջորդ ամսվա 20-ը, ՀՀ հարկային տեսչությանն է հայտնում տեղեկություններ «Ձեռնարկությունների պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացվող գրանցումների վերաբերյալ: Սահմանվում է, որ ՀՀ արդարադատության նախարարությունն իրա-

վաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից պետական գրանցում ստացած կազմակերպությունների և հաշվառված անհատ ձեռնարկատերերի մասին տեղեկությունները ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին հասանելի լինելու համար՝ վերոնշյալ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին է տրամադրում արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության համապատասխան մուտքի անունն ու գաղտնաբառը:

Փաստաթուղթ	«Հսկիչ նշանների (դրոշմապիտակների) միջոցով տեսաձայնային մագնիսական կրիչների պարտադիր դրոշմավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրառման լիազոր մարմին ճանաչելու մասին» ԶԳ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	20 մայիսի 2011թ, N 644-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 31 (834), 01.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ «Հսկիչ նշանների (դրոշմապիտակների) միջոցով տեսաձայնային մագնիսական կրիչների պարտադիր դրոշմավորման մա-

սին» ՀՀ օրենքի կիրառման լիազոր մարմին է ճանաչվում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա տեսաձայնային մագնիսական կրիչների դրոշմավորման համար «2011» թվագրմամբ հսկիչ նշանները (դրոշմապիտակները) կիրառության մեջ դնելու մասին» ԶԳ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	20 մայիսի 2011թ, N 647-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 31 (834), 01.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ հսկիչ նշանների (դրոշմապիտակների) միջոցով տեսաձայնային մագնիսական կրիչների պարտադիր դրոշմավորման

համար կիրառության մեջ են դրվում «2011» թվագրմամբ հսկիչ նշանները (դրոշմապիտակները):

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 15-ի N 551 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	05 մայիսի 2011թ, N 654-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 31 (834), 01.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվում է, որ միջպետական հաղորդակցության մարդատար գնացքներով ՀՀ մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելիս՝ բեռնային վագոնի բացակայության դեպքում ուղևորը կարող է ուղևորային մասներս բերել երկաթուղային տրանսպորտի բնագավառը կարգավորող օրենսդրությամբ սահմանված չափի ուղեբեռ:

Գնացքի ուղևորային մասում տեղակայված ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված բնափրային և արժեքային չափերը գերազանցող կամ ոչ սակագնային կարգավորման ենթակա, ինչպես նաև բեռնային վագոնով տեղափոխվող ապրանքների համար երկաթգծի «Այրում» կայարանում՝ մինչև մաքսային հսկողության իրականացումը ֆիզիկական անձանց կողմից լրացվում է վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևի ուղեբեռնային մաքսային հայտարարագիր:

Սահմանվում է, որ ֆիզիկական անձանց կողմից ներկայացված ուղևորային վագոնով տեղափոխվող ապրանքների ուղեբեռնային մաքսային ձևակերպումներն իրականացվում են երկաթգծի «Այրում» կայարանում, իսկ մաքսային հսկողությունն իրականացվում է նաև գնացքի շարժման ընթացքում՝ մինչև երկաթգծի «Վանաձոր» կայարանը:

Մաքսային հսկողության ընթացքում մաքսային կանոնների խախտումներ հայտնաբերվելու դեպքում կազմվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն, և ապրանքները մաքսային մարմինների կողմից բաց չեն թողնվում, իսկ սահմանված չափից ավելի ուղեբեռ ուղևորային մաս ներս բերելու դեպքում մաքսային մարմինները դրա մասին տեղեկացնում են փոխադրողին:

Ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող



ոչ սակագնային կարգավորման ենթակա ապրանքները մաքսային մարմինների կողմից բաց չեն թողնվում՝ մինչև դրանց համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող փաստաթղթերը ներկայացնելը:

Ուղևորային փոխադրումներ իրականացնող կազմակերպություններն ապահովում են ՀՀ մաքսային, երկաթուղային տրանսպորտի օրենսդրությունը բնութագրող ուղեցույցների, ուղևորների կողմից ուղևորային մաս ներս բերվող ուղեբեռների թույլատրելի չափերի և մաքսային վճարների դրույքաչափերի մասին ՀՀ օրենքներից, ինչպես նաև երկաթուղային փոխադրումների կանոններից քաղվածքների տեղադրումը միջպետական հաղորդակցության մարդատար գնացքների բոլոր վագոններում և երկաթուղային կայարանների սպասարաններում:



Փաստաթուղթ	«Ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող տեսաձայնային մագնիսական կրիչների առավելագույն թույլատրելի քանակը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	20 մայիսի 2011թ, N 656-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 31 (834), 01.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվում է, որ ֆիզիկական անձամբ կողմից անձնական օգտագործման նպատակով ՀՀ ներմուծվող տեսաձայնային մագնիսական կրիչների քանակը, որոնց վրա, «Հսկիչ նշանների (դրոշմապիտակների) միջո-

ցով տեսաձայնային մագնիսական կրիչների պարտադիր դրոշմավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն, հսկիչ նշանի (դրոշմապիտակի) առկայությունը պարտադիր չէ, չի կարող գերազանցել 10-ը:

Փաստաթուղթ	«Հարկային մարմնի կողմից հարկային հաշիվների թղթային ձևերի տրամադրման, դուրսգրման, պահպանման, ստացված հարկային հաշիվների ձևերի օգտագործման մասին հաշվետվությունը ներկայացնելու, խոտանված, անվավեր ճանաչված և չօգտագործված հարկային հաշիվների ձևերի վերադարձման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	20 մայիսի 2011թ, N 685-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 34 (837), 08.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվում է հարկային մարմնի կողմից հարկային հաշիվների թղթային ձևերի տրամադրման, դուրսգրման, պահպանման, ստացված հարկային հաշիվների ձևերի օգ-

տագործման մասին հաշվետվությունը ներկայացնելու, խոտանված, անվավեր ճանաչված և չօգտագործված հարկային հաշիվների ձևերի վերադարձման կարգը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	02 հունիսի 2011թ, N 761-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 35 (838), 15.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություն և լրացում է կատարվում ՀՀ կառավարության 12.10.2006թ-ի «Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև կնքված «Հազարամյակի մարտահրավերներ» համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և պարտադիր այլ վճարների գծով արտոնությունների կիրառման կարգը հաստատելու մասին» N 1461-Ն որոշման մեջ, որի համաձայն՝ օտա-

րերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք ազատվում են իրենց վճարվող եկամուտներից վճարման ենթակա պարտադիր սոցիալական ապահովության վճարումներ կատարելուց: Վերոնշյալ որոշմամբ փոփոխություններ ու լրացումներ են կատարվել նաև ՀՀ կառավարության 26.02.2004թ-ի «Մի շարք միջազգային պայմանագրերով նախատեսված հարկային և մաքսային վճարների գծով արտոնություններ-

րի կիրառման կարգը հաստատելու մասին» N 256-Ն որոշման մեջ, որով նախատեսվում է համաձայնագրերով իրականացվող ծրագրերի շրջանակներում ապահովագրիչների ազատում օտարերկրյա քաղաքացիներին ու քաղաքացիություն չունեցող անձանց վճարվող աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտներից պարտադիր սոցիալական

ապահովության վճարներ հաշվարկելու, գանձելու և պարտադիր կարգով ՀՀ պետական բյուջե վճարելու պարտավորությունից: ՀՀ ոչ ռեզիդենտներն ազատվում են իրենց վճարված եկամուտներից շահութահարկի վճարման պարտավորությունից, եթե համաձայնագրով նախատեսված է ոչ ռեզիդենտի ազատում շահութահարկից:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 13-ի N 147-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	10 հունիսի 2011թ., N 796-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 38 (841), 22.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 13.02.2008թ-ի «Նոտարների և Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների հարկային մարմնում հաշվառման կանգնելու ընթացակարգերը սահմանելու մասին» N 147-Ն որոշման մեջ, որով հաստատվում են.

1. | Նոտարների՝ հարկ վճարողի հաշվառման վկայականի ձևաթղթում պարունակվող տեղեկությունների ցանկը,
2. | ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների՝ հարկային հաշվառման վկայականի ձևաթղթում պարունակվող տեղեկությունների ցանկը,



3. | Նոտարների՝ հարկ վճարողի հաշվառման վկայականի ձևաթուղթը,
4. | ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների՝ հարկային հաշվառման վկայականի ձևաթուղթը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 2170-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	23 հունիսի 2011թ., N 853-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 41 (844), 06.07.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվում է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով (Մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդը) սահման-

ված փաստաթղթերը ներկայացվելուց հետո մաքսային մարմինները երկու աշխատանքային օրվա ընթացքում ընդունում կամ մերժում

են մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների՝ 87-րդ հոդվածում նշված մեթոդով հաշվարկված մաքսային արժեքը: Մաքսային մարմինների կողմից վերոնշյալ ժամկետում՝ 87-րդ հոդվածում նշված մեթոդով հաշվարկված մաքսային արժեքի մերժման վերաբերյալ որոշման ընդունման դեպքում դրա մասին գրավոր տեղեկացվում է հայտարարա-

տուին՝ նշելով մերժման հիմքերը: Մաքսային մարմինների կողմից վերոնշյալ ժամկետում՝ 87-րդ հոդվածում նշված մեթոդով հաշվարկված մաքսային արժեքի մերժման վերաբերյալ համապատասխան որոշման չընդունման դեպքում հայտարարատուի կողմից ներկայացված մաքսային արժեքը համարվում է ընդունված:

Փաստաթուղթ	«2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին օրենքով սահմանված հարկ վճարողների ցանկը և հարկային մարմնի կողմից վերահսկվող պարտավորությունների բացակայության մասին տեղեկանքը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	23 հունիսի 2011թ., N 882-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 42 (845), 13.07.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվում է 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին

օրենքով սահմանված հարկ վճարողների ցանկը և հարկային մարմնի կողմից վերահսկվող պարտավորությունների բացակայության մասին տեղեկանքը ՀՀ արդարադատության նախարարություն տրամադրելու կարգը:

## 1.3 | Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Անշարժ գույքի հետ կապված իրավունքները գրանցված չլինելու պայմաններում այդ գույքի հետ կապված գործարքների մասով ավելացված արժեքի հարկի և շահութահարկի գծով հաշվարկների կատարման կարգի մասին» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	02 հունիսի 2011թ., 20 մայիսի 2011թ., N 24
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N 14 (397), 17.06.2011թ.

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ.

1.«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 44.1-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը (Առոչինչ և անվավեր ճանաչվող գործարքների գծով մատակարարների կողմից դուրս գրված կամ անսպասելի փաստաթղթերում նշված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցման ենթակա չլինելու վերաբերյալ) կիրառվում է անշարժ գույքի հետ կապված միայն այն գործարքի մասով, որի կատարման արդյունքում ծագող իրավունքները

(մասնավորապես՝ վարձակալության իրավունքը, անհատույց օգտագործման իրավունքը) պետական գրանցում չեն ստացել:

2.Այն դեպքերում, երբ անշարժ գույքի նկատմամբ անձի իրավունքները պետական գրանցում չեն ստացել, սակայն փաստացի այն վարձակալվում կամ անհատույց օգտագործվում է անձի կողմից, և տվյալ անձը այդ գույքի վրա արտադրական կամ այլ առևտրային նպատակներով կատարում է ծախսեր՝ այդ ծախսերին (ձեռքբերումներին) վերաբերող հարկային

հաշիվներում կամ ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրում առանձնացված ԱՎՅ-ի գումարները ենթակա են հաշվանցման օրենքով սահմանված ընդհանուր կարգով, դեպքերում և չափով:

3.Վարձակալված (կամ անհատույց օգտագործման իրավունքով ստացված) անշարժ գույքի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը ամորտիզացվում են «Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգով սահմանված կարգով՝ անկախ անշարժ գույքի վարձակալության (կամ անհատույց օգտա-

գործման իրավունքով ստացման) պայմանագրի նոտարական վավերացման և (կամ) պետական գրանցման պահանջը կատարված լինելու հանգամանքից:

4.Եթե անշարժ գույքի հետ կապված իրավունքները չեն գրանցվում և պայմանագրի լուծման կամ չկատարվելու արդյունքում այդ գույքը հետ է վերադարձվում գույք տրամադրողին (այդ թվում՝ սեփականատիրոջը), ապա անշարժ գույքի վրա կատարված՝ կապիտալ բնույթի ծախսերի արժեքի չամորտիզացված մասի չափով այդ ծախսերը կատարողի մոտ առաջանում են ԱՎՅ-ով հարկվող շրջանառություն:



Փաստաթուղթ	«Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կապարակնքման կարգը հաստատելու մասին» ՀՀ Էկոնոմիկայի նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի համատեղ հրաման
Ամսաթիվը և համարը	10 մայիսի 2011թ, N298-Ն, 19 մայիսի 2011թ, N 772-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 16 (399), 01.07.2011թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվում է ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կապարակնքման կարգը, որի համաձայն՝ ԱԳԼՃԿ-ն շահագործելիս անցկացվում է ստուգաչափում՝ օրենքով սահմանված կարգով: ԱԳԼՃԿ-ի տնօրինությունը իր հաշվառման վայրի Հարկային տեսչություն է ներկայացնում ավտոգազալիցքավորման աշտարակի տեսակի հաստատման սերտիֆիկատը և յուրաքանչյուր աշտարակի համար ստուգաչափման մասին առանձին վկայական: Գազի հնարավոր լրացուցիչ արտահոսքը բացառելու համար ԱԳԼՃԿ-ի գազաբաշխիչ կայանը, գազի

հանգույցները և խողովակաշարերը պետք է կապարակնքված լինեն համատեղ Հարկային տեսչության և Չափագիտության ազգային ինստիտուտի կողմից:

Սահմանվում է, որ ԱԳԼՃԿ-ի տնօրինությունը վերանորոգման աշխատանքներ կատարելու դեպքում հայտ է ներկայացնում Չափագիտության ազգային ինստիտուտ և ստանում համապատասխան թույլտվություն կապարակնիքը հանելու համար: Վերջինս Հարկային տեսչությանը տեղեկացնում է ԱԳԼՃԿ-ի տնօրինության կողմից ներկայացված հայտի վերաբերյալ:

Եթե ԱԳԼԾԿ-ի աշխատակիցները հայտնաբերում են, որ կապարակնիքը վնասված կամ հանված է, ապա ԱԳԼԾԿ-ի տնօրինությունը պարտավոր է 24 ժամվա ընթացքում տեղեկացնել Հարկային տեսչությանը կան Չափագիտության ազգային ինստիտուտին՝ գումարային հաշվիչի ցուցմունքի և արդյունաբերական հաշվիչի ցուցմունքի տվյալները գրանցելով և կասեցնելով տվյալ գազալիցքավորող աշտարակի հետագա շահագործումը: Եթե Չափագիտության ազգային ինստիտուտի կողմից

հայտնաբերվում են թերություններ, ապա այդ մասին գրավոր տեղյակ է պահվում Հարկային տեսչությանը, եթե Հարկային տեսչության կողմից հայտնաբերվում է մուտքային և ելքային հաշվիչների ցուցմունքների միջև 5% և ավելի տարբերություն՝ տեղյակ է պահվում Չափագիտության ազգային ինստիտուտին՝ հետագա քայլեր ձեռնարկելու համար: ԱԳԼԾԿ-ի տնօրինությունն է պատասխանատու ԱԳԼԾԿ-ի տեխնիկական շահագործման համար:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության 1999 թվականի մարտի 4-ի N 01/13 հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության 1999 թվականի հունվարի 27-ի N 01/7 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	19 ապրիլի 2011թ, N 729-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 16 (399), 01.07.2011թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվում են ՀՀ հարկային տեսչության 1999 թվականի մարտի 4-ի «Ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին հրահանգը հաստատելու մասին» N01/13 հրամանում կատարվող փոփոխությունները և լրացումները: Ուժը կորցրած է ճանաչվում ՀՀ հարկային տեսչության 1999 թվականի հունվարի 27-ի

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով նախատեսված տարեկան եկամուտների մասին հայտարարագրի ձևի և նրա լրացման կարգի, օրենքի 62 հոդվածով նախատեսված հաշվետու տարվա համար հաշվարկված շահութահարկի վերջնական գումարի վճարման ծանուցագրի ձևի վերաբերյալ» հրահանգչական Նամակը հաստատելու մասին» N 01/7 հրամանը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2005 թվականի մայիսի 30-ի N 1-05/05-Ն հրամանում լրացում կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	06 մայիսի 2011թ, N 762-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 16 (399), 02.07.2011թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով լրացում է կատարվում ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության պետի 2005 թվականի մայիսի 30-ի «Պարտադիր սոցիալա-

կան ապահովության վճարների հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգը հաստատելու մասին» N 1-05/05-Ն հրամանում:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի «Բ» ենթակետի կիրառման մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	01 հունիսի 2011թ, N 26
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 16 (399), 01.07.2011թ.

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ.

**1.** | Եթե լիցենզավորման ենթակա այն գործունեությունը, որի համար պետական տուրքի տարեկան գումարը սահմանված է եղել 100 հազար դրամ կամ ավելի, օրացուցային տարվա ընթացքում օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում դադարում է համարվել լիցենզավորման ենթակա, ապա այդ գործունեությունն իրականացնող կամ լիցենզիա ստացած անձինք շարունակում են համարվել ԱԱՀ վճարող՝ մինչև օրացուցային տարվա ավարտը:

**2.** | Լիցենզավորման ենթակա գործունեության համար պետական տուրքի տարեկան գումարի չափը օրացուցային տարվա ընթացքում օրենքի փոփոխությամբ 100 հազար դրամից պակաս սահմանվելու դեպքում այդ գործունեությունն իրականացնող կամ լիցենզիա ունեցող անձինք ԱԱՀ վճարող են համարվում մինչև ընթացիկ տարվա ավարտը:

**3.** | Իրականացվող գործունեությունը օրացուցային տարվա ընթացքում օրենքում կատարված փոփոխությամբ լիցենզավորման ենթակա համարվելու և տվյալ գործունեության համար պետական տուրքի տարեկան գումարի չափը 100 հազար դրամ կամ ավելի սահմանվելու դեպքում անձանց նկատմամբ ԱԱՀ-ի շեմը կիրառվում է մինչև ընթացիկ տարվա ավարտը, եթե անձը բավարարում է շեմի

կիրառման համար օրենքով սահմանված մյուս պահանջներին:

**4.** | Եթե լիցենզավորման ենթակա գործունեության այն տեսակները, որոնց համար տարեկան պետական տուրքի դրույքաչափը սահմանված է մինչև 100 հազար դրամ, օրենքով համախմբվում են լիցենզավորման ենթակա գործունեության մեկ տեսակում, որի համար տարեկան պետական տուրքի դրույքաչափն օրենքով սահմանվում է 100 հազար դրամ կամ ավելի, ապա մինչև օրենքում փոփոխությունների կատարումը գործունեության այդ տեսակների մասով լիցենզիա (լիցենզիաներ) ստացած անձի նկատմամբ ԱԱՀ-ի շեմը կիրառվում է մինչև ընթացիկ տարվա ավարտը, եթե անձը բավարարում է շեմի կիրառման համար օրենքով սահմանված մյուս պահանջներին:

**5.** | Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու դեպքում, որի համար պետական տուրքի տարեկան գումարը սահմանված էր մինչև 100 հազար դրամ, և ընթացիկ տարում օրենքի փոփոխությամբ այդ գործունեության համար պետական տուրքի տարեկան գումարի չափը սահմանվում է 100 հազար դրամ կամ ավելի, անձանց նկատմամբ ԱԱՀ-ի շեմը կիրառվում է մինչև ընթացիկ տարվա ավարտը, եթե անձինք բավարարում են շեմի կիրառման համար Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված մյուս պահանջներին:

Փաստաթուղթ	«Մինչև 180 օրվա ընթացքում «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման դեպքերում ավելացված արժեքի հարկի գումարների վերադարձման և ավելացված արժեքի հարկի հաշվարկների կատարման կարգի վերաբերյալ» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	03 հունիսի 2011թ., N 27
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 16 (399), 01.07.2011թ.

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ 2009թ-ի հունվարի 1-ից հետո իրականացրած՝ ՀՀ տարածքից «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով (բացառությամբ՝ «Ժամանակավոր ներմուծում վերամշակման համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների նկատմամբ «Վերաարտահանում» ռեժիմի կիրառման դեպքերի) ապրանքների արտահանման գործարքների իրականացման համար ձեռք բերված

ապրանքների մատակարարների հարկային հաշիվներում, հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններում, կրճատ հաշիվ ապրանքագրերում առանձնացված ԱԱՀ-ի գումարները պակասեցվում են հաշվանցվող ԱԱՀ-ի գումարներից՝ «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով ապրանքների արտահանման հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկով:



Այն անձինք, ովքեր ՀՀ կառավարության 2005թ-ի նոյեմբերի 3-ի N 1929-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան 2009թ. հունվարի 1-ից հետո մինչև 180 օրվա ընթացքում «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» ռեժիմով ներմուծված ապրանքների՝ ՀՀ մաքսային տարածքից արտահանման գործարքների մասով հարկային

մարմնից ստացված տեղեկանքով հետ են ստացել ապրանքների ներմուծման ժամանակ վճարած ԱԱՀ-ի գումարները, սակայն ապրանքների վերաարտահանման հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկով նախկինում հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վերաձևակերպում չեն կատարել՝ պարտավոր են այդ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացնել ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկ և պակասեցնել հաշվանցվող գումարները:

«Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ապրանքների ներմուծման ժամանակ մաքսային մարմիններին վճարված և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի հիման վրա այդ ապրանքների վերաարտահանման հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկով վերահաշվարկված ԱԱՀ-ի գումարները շահութահարկով հարկման նպատակով արտադրության և (կամ) շրջանառության ծախսերին չեն միացվում, քանի որ մաքսային մարմինների կողմից վերադարձի դեպքում դրանք այլևս չեն կարող համարվել որպես չփոխատուցվող (չհաշվանցվող) հարկի գումարներ:

Փաստաթուղթ	«Պետական տուրքի վճարման որոշ հարցերի վերաբերյալ» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	07 հունիսի 2011թ., N 28
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N 16 (399), 01.07.2011թ.

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների պետական տուրքի դրույքաչափը հաշվարկվում է՝ նկատի ունենալով հայցվող քաղաքաշինա-

կան ոլորտների ներդիրների քանակը՝ հայցվող յուրաքանչյուր ոլորտի համար լիցենզիաների պետական տուրքի դրույքաչափը բաժանած հինգի:

Փաստաթուղթ	«Աշխատանքային վեճի շրջանակներում օրինական ուժի մեջ մտած դատարանի վճիռներով վարձու աշխատողներին վճարվող գումարների հարկման վերաբերյալ» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	17 մայիսի 2011թ., N 21
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N 17 (400), 15.07.2011թ.

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ եթե աշխատանքային վեճերին վերաբերող օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով գործատուին պարտադրվում է վարձու աշխատողին վճարել

ԱՎՈՒՄ (այդ թվում՝ հարկադիր պարապուրդների դիմաց), ապա այդ դեպքում դատարանի վճռին համապատասխան գործատուի կողմից վարձու աշխատողին վճարվող ԱՎՈՒՄ-



ից եկամտահարկի և սոցիալական վճարների գումարները հաշվարկվում և վճարվում են հետևյալ ձևով՝

**ա.** վիճարկվող ողջ ժամանակահատվածի համար կատարվում է եկամտահարկի և սոցիալական վճարների վերահաշվարկ՝ յուրաքանչյուր ժամանակահատվածի համար գործող օրենսդրությանը համապատասխան (այսինքն՝ հաշ-

վի առնելով այդ ժամանակահատվածների համար օրենքով սահմանված անձնական նվազեցման չափերը, եկամտահարկի դրույքաչափերը և հաշվարկման կարգը),

**բ.** վերահաշվարկման արդյունքում եկամտահարկի և սոցիալական վճարների լրացուցիչ գումարները հաշվարկվում են օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռում նշված՝ գործատուի կողմից վարձու աշխատողին վճարման ենթակա ԱՎՈՒՄ-ի վճարման ամսում և վերահաշվարկված ԱՎՈՒՄ-ի գումարների հետ միասին արտացոլվում են այդ ամիսը ներառող հաշվետու եռամսյակի հարկային գործակալի եկամտահարկի հաշվարկում և գործատուի սոցիալական վճարների հաշվետվությունում (այդ ամսվանը համապատասխանող սյունակում):

ՀՀ պետական բյուջե վճարվում (փոխանցվում) են այդ ամսվա՝ եկամտահարկի և սոցիալական վճարների համար օրենքով սահմանված վճարման վերջնաժամկետում, վերահաշվարկված ԱՎՈՒՄ-ների նկատմամբ տույժեր և տուգանքներ չեն կիրառվում, եթե դատարանի վճռում այլ բան նախատեսված չէ:

## 2. ՀԱՐԱԿԻՑ (ՀՀ ԿԱ ՊԵԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ) ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փաստաթուղթ	«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	11 մայիսի 2011թ., ՀՕ-156-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր №32 (835), 03.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Ուժը կորցրած են ճանաչվում «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ 26.12.1997թ-ի ՀՕ-179 օրենքի 6-րդ հոդվածի 8-րդ մասի 2-6-րդ պարբերությունները, որոնցով կարգավորվում էին սոցիալական

վճարների պարտավորության չկատարման դեպքում լիազորված մարմնի կողմից ապահովագրի գույքի վրա արգելանք դնելու հետ կապված հարաբերությունները:

Փաստաթուղթ	«Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	26 մայիսի 2011թ., ՀՕ-190-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր №39 (842), 24.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը



### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ յուրաքանչյուր հարկային տարվա համար գույքի և եկամուտների մասին հայտարարագիր են ներկայացնում նաև Ազգային ժողովի

աշխատակազմում պետական ծառայության պաշտոններ զբաղեցնողներից՝ պետական ծառայության բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք:

Փաստաթուղթ	«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	25 մայիսի 2011թ., ՀՕ-198-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր №39 (842), 24.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ ՀՀ տարածքում ստեղծված ազատ տնտեսական գոտում իրականացվող գործարքների գնանշումները կամ վճարումները, ինչպես նաև ազատ տնտեսական գոտու շահագործողների և ՀՀ ռեզիդենտ հանդիսացող

իրավաբանական անձանց (անհատ ձեռնարկատերերի) միջև կատարվող գործարքների գնանշումները կամ անկանխիկ վճարումները՝ անկախ դրանց գումարային մեծությունից, կարող են իրականացվել նաև ազատ փոխարկելի արտարժույթով:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	23 հունիսի 2011թ., ՀՕ-214-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր №42 (845), 13.07.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Օրենսգրքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված «ապօրինի ձեռնարկատիրություն», «կեղծ ձեռնարկատիրություն», «կանխամտածված սնանկություն», «կեղծ սնանկություն», «հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց

չարամտորեն խուսափելը», «քաղաքացու կողմից հարկ վճարելուց խուսափելը» արարքները կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա հատուցում է հանցագործությամբ պատճառված վնասը և հաշվարկված տույժերն ու տուգանքները:



### 3. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

#### 3.1 | Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

##### 3.1.1 | Գանգատարկումներ և ծառայողական քննություններ /հարկային ծառայության մասով/

20.05.2011թ-ից մինչև 20.07.2011թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից քննարկվել է 55 դիմում-գանգատ, որից.

- բավարարվել է 30 դիմում-գանգատ,
- մերժվել է 19 դիմում-գանգատ,
- կարճվել է 6 դիմում-գանգատ:

20.06.2011թ-ից մինչև 20.07.2011թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել են 4 ծառայողական քննության ընթացքում ստեղծված Նյութեր, որոնց արդյունքում 9 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

#### 3.2 | Միջազգային համագործակցություն

2011թ. հունիսի 6-ից 10-ը ք. Իրկուտսկում (Ռուսաստանի Դաշնություն) տեղի է ունեցել ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 53-րդ նիստը, որին մասնակցել են ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանը և նախագահի առաջին տեղակալ Ա. Աֆրիկյանը: Նիստի ընթացքում քննարկվել են մաքսային ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային իրավական բազայի վերանայման, ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների միջև հետբացթողումային հսկողության ոլորտում տեղեկատվության փոխանակման հատուկ կարգ մշակելու հարցերը, ապրանքների և փոխադրամիջոցների մաքսային արժեքը բնորոշող տվյալների փոխանակման դեպքում ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների փոխգործակցության կարգի, ինչպես նաև ԱՊՀ մաքսային ծառայությունների միջև միասնական տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա իրականացման ժամկետների հետ կապված հարցեր:

Բացի վերը նշված թեմաներից, հավանության են արժանացել նաև ԱՊՀ մաքսային ծառայությունների իրավական բազայի և համատեղ քննարկումների համար ստեղծված հատուկ ինտերնետային միջավայրի (web portal) տեխնիկական հնարավորությունների և ՌԴ մաքսային ակադեմիայի բազայի հիման վրա ԱՊՀ մաքսային ծառայությունների կադրերի վերապատրաստման հայեցակարգերը:

Հայկական կողմը բարձրացրել է հետբացթո-



ղումային հսկողության ոլորտում տեղեկատվության փոխանակման հատուկ կարգ մշակելու վերաբերյալ Արձանագրությանը հավանություն տալու և ներպետական անհրաժեշտ ընթացակարգերը սկսելու հարց, որն անցել է միաձայն (բացառությամբ Ադրբեջանի Հանրապետության): Ի թիվս վերը նշված հարցերով ընդունված որոշումների, ընդունվել է նաև որոշում՝ ԱՊՀ մաքսային ծառայությունների կազմում ընդգրկված համապատասխան մասնագետների համար կազմակերպել կիսուրօրյակական դասընթացներ Ռուսաստանի Դաշնությունում և Ուկրաինայում: Միաձայն ընդունվել է նաև ԱՊՀ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի հինգերորդ խմբագրությունը:

Նիստը հոբեյանական էր և նշվում էր ԱՊՅ քսանամյա գործունեության տարեդարձի շրջանակներում: Այդ կապակցությամբ ԱՊՅ անդամ երկրների որոշ մաքսային ծառայողներ պարգևատրվել են գովասանագրերով և հուշամեդալներով: ԶՅ ԿԱ ՊԵԿ նախագահը ԱՊՅ գործադիր կոմիտեի նախագահ Ս. Լեբեդևի կողմից պարգևատրվել է ԱՊՅ անդամ-պետությունների մաքսային ծառայությունների համատեղ աշխատանքում ակտիվ մասնակցության և համագործակցության ամրապնդման համար գովասանագրով, իսկ ՌԴ դաշնային մաքսային ծառայության ղեկավարի կողմից՝ համապատասխան հուշամեդալով: 2011 թվականի հուլիսի 11-16-ը ԶՅ ԿԱ ՊԵԿ պատվիրակությունը գործուղվել է Զելսինսկի՝ Ֆինլանդիայի Զանրապետություն, և Վիլն-

յուս՝ Լիտվայի Զանրապետություն՝ ՊԵԿ-ում մեկնարկելիք Թվինինգ ծրագրի նախապատրաստական հանդիպումներին մասնակցելու նպատակով: Այցի ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել ինչպես Ֆինլանդիայի, այնպես էլ Լիտվայի մաքսային ծառայությունների պաշտոնատար անձանց հետ, որոնց արդյունքում վերջնականացվել է Թվինինգ խորհրդատուի գործունեության պայմանագիրը: Սույն թվականի հուլիսի 3-7-ը ապահովվել է մասնակցություն Մինսկում՝ Բելառուսի Զանրապետություն, կայացած ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում կազմակերպած «Սահմանների համալիր կառավարում» թեմայով երկրորդ տարածաշրջանային աշխատաժողովին:

### 3.3 ԶՅ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ

Զ/Զ	Ցուցանիշ	Չափման միավոր	2011թ. մայիս
1	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	4319
2	Բռնագանձման և սնանկության համար ներկայացված հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	Զուևվար-հունիս 1744
2.1	Բավարարված	հատ	1009
2.2	Մերժված	հատ	46
2.3	Քննության ընթացքում գտնվող	հատ	1132
3	Բռնագանձման և սնանկության համար ներկայացված հայցերով գանձված գումարներ	մլն դրամ	22430.3
4	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	15913
4.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	285.0
5	ԶՅ ԿԱ ՊԵԿ կողմից հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	2115
5.1	ԶՅ ԿԱ ՊԵԿ կողմից հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	6437.8
6	ԶՅ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	հատ	55
6.1	ԶՅ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	1034.7
7	ԶՅ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	հատ	181
7.1	Ավարտված	հատ	30
7.2	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	հատ	30
7.3	Կասեցված	հատ	13
8	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	464.6

### 3.4 | Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2011թ.		
			հունիս	հունվար-հունիս	Աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-հունիս,%)
1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ, պետական տուրք և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, այդ թվում՝	մլն դրամ	66,320.2	374,582.2	110.11
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում՝	մլն դրամ	54,054.6	303,982.4	109.80
1.1.1	ԱԱՀ	մլն դրամ	25,937.0	149,133.1	110.31
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	11,256.6	56,580.9	130.19
1.1.3	Եկամտահարկ	մլն դրամ	6,311.9	37,448.7	108.60
1.1.4	Ակցիզային հարկ	մլն դրամ	1,954.8	10,548.2	148.46
1.1.5	Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար	մլն դրամ	1,672.6	9,792.4	97.78
1.1.6	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճար	մլն դրամ	1,717.9	9,789.6	96.12
1.1.7	Մաքսատուրք	մլն դրամ	3,440.9	16,942.1	116.48
1.1.8	Այլ հարկային եկամուտներ	մլն դրամ	1,762.9	13,747.5	62.87
1.2	Պետական տուրք	մլն դրամ	2,058.6	9,734.8	112.73
1.3	Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	մլն դրամ	10,207.0	60,865.0	111.29
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	148 852	933 691	110.7
2.1	Արտահանում	մլն դրամ	24 944	220 931	129.0
2.2	Ներմուծում	մլն դրամ	123 908	712 760	106.0



բոլոր հարցերն ունեն իրենց պատասխանները՝

[www.taxservice.am](http://www.taxservice.am) ■ [www.customs.am](http://www.customs.am)